

Դիվան հայ վիմագրություն, պրակ II, կազմեց Ս. Գ. ԲԱՐՍԵՍԻԱՆԻ-ՅԱՆ, Հայկական ՍՍՌ-ԳԱ Հրատարակչություն, Երևան, 1960, 240 էջ, գին 1 ո. 08 կ.:

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հրատարակած այս պրակը, որ խմբագրել է պրոֆ. Բարկեն Առաքելյանը, իր մեջ պարունակում է Գորիսի, Սիսիանի և Ղափանի այժմյան վարչական շրջանների հայերեն վիմական արձանագրությունները: Այս գիրքը բաղմահատուր ժողովածուի պրակներից մեկն է:

Հայերեն վիմական արձանագրությունները շարուստ նյութ են պարունակում մեր ժողովրդի միջնադարյան պատմության վերաբերյալ, ինչպես նաև հայոց լեզվի և բարբառագիտության, տնտեսության և իրավունքի, արվեստի և արհեստների, շինարարության և ճարտարապետության և շատ այլ բնագավառների վերաբերյալ:

Անցյալ դարի ընթացքում լույս տեսան տեղագրական բնույթի մի շարք աշխատություններ, որոնց մեջ նկարագրված են Հայաստանի հնավայրերը, տպագրվեցին բաղմամբով արձանագրություններ գրված բերդերի, կամուրջների, վանքերի, խաչքարերի, տապանաքարերի և այլ հուշարձանների վրա: Վիմական արձանագրությունների հրատարակությամբ հայագիտության մեջ հայտնի դարձան մի շարք հեղինակներ, որոնց աշխատությունների մի մասը այսօր էլ չի կորցրել իր գիտական արժեքը: Այդ կարգի հեղինակներից հիշատակության արժանի են Հովհաննես Ղրիմեցին, Սարգիս Ջալալյանցը, Հովհաննես Շահխաթունյանցը, Մակար Բարխուդարյանցը, Արևիկ Մխիթարյանցը, Ռոստոմերեկ Նրզնկյանցը, Ալեքսանդր Նրիցյանը, Քաջերունին, Գարեգին Սրվանձուտյանը, Արիստակես Սեդրակյանը, Ալիշանը, Սրվանդ Լալայանը, Մխիթար Տեր-Մկրտչյանը և շատ ուրիշներ:

Սակայն անցյալում հրատարակված արձանագրությունները լիովին չեն բավարարում գիտության այսօրվա պահանջները: Նախ՝ այն պատճառով, որ հավաքողները բոլոր արձանագրությունները չեն հրատարակել, այլ բնորոշություն են կատարել և իրենց ենթադրությամբ կարևորներն են հրատարակել: Երկրորդ՝ արձանագրությունները խմբագրել են և, շատ դեպքերում, նրանց բովանդակության միջից կրճատել իրենց կարծիքով անկարևոր տեղերը: Յրրորդ՝ արձանագրությունները չեն օժտել օժանդակ նյութերով (լուսանկարով, գծագրու-

թյամբ, ծանոթագրություններով, մեկնաբանություններով և այլն):

Այդ պատճառով ծառացել է հայերեն վիմական արձանագրությունների լրիվ գիտական հրատարակության հարցը, և գովելի է, որ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Հնագիտության և ազգագրության ինստիտուտը գլուխ է բերում այդ հրատարակությունը:

Հայերեն վիմական արձանագրությունների թիվը մոտ տասը հազար է. նրանց հավաքումն ու հրատարակումը պահանջում է մի քանի մարդուց բաղկացած մասնագետների խումբ, սակայն Հնագիտության և ազգագրության ինստիտուտը այդ կարևոր գործի շուրջը դեռևս չի համախմբել թեկուզ սակավաթիվ այն մասնագետներին, որոնք տարիներ շարունակ զբաղվել են վիմական արձանագրությունների հավաքմամբ և հրատարակությամբ: Այդ աշխատանքը փաստորեն դրված է միայն Ս. Բարխուդարյանի ուսերին:

Ս. Բարխուդարյանի հրատարակած պրակի մեջ տեղ են գտել մի քանի թերություններ, որոնք որոշ չափով նսեմացնում են այս հիանալի գրքի գիտական արժեքը:

Գիրքը վերնագրված է «Դիվան հայ վիմագրության»: Այդ ընդհանուր խորագրով են լույս տեսնելու աշխատության բոլոր պրակները: Սակայն պարզ է, որ այստեղ շփոթություն կա. քարերի վրա գրված հին արձանագրությունները մինչև այժմ հայերենում կոչվել են վիմական արձանագրություններ և այսուհետև էլ պետք է այդպես կոչվեն, քանի որ «վիմագրություն» նշանակում է և՛ լուսագրություն: Երկրորդ՝ բառերի ստեղծելու հարկ չկա:

Վերնագրի հետ կապված մի այլ խնդիր էու Հասկանալի է, որ եթե գրքի վերնագրի մեջ շեշտվում է, որ գիրքը միայն քարերի վրա գրված արձանագրությունների ժողովածու է, ապա նրա մեջ այլ նյութերի վրա գրվածները տեղ չպետք է ունենան, այլապես սխալ կլինի վերնագիրը: Սակայն կազմողը այդպես չի վարվել. գրքի մեջ նա զետեղել է նաև ոսկու, արծաթի, պղնձի և փայտի վրա գրված այնպիսի արձանագրություններ, որոնք նա ոչ տե-

1 Հավ կլինի, եթե առաջին և հետագայում լույս տեսնող պրակների վրա ընդհանուր վերնագիրը դրվի «Դիվան հայ վիմական արձանագրությունների»:

սել է. ոչ էլ վերծանել կամ լուսանկարել: Գրանցից են Տաթևի Ա՝ 77 արձանագրությունը՝ գրված «մի ոսկե խաչի թիկունքին», նույն տեղի Ա՝ 78 արձանագրությունը՝ փորագրված «մի գանգի վրա», Ա՝ 79-ը՝ «մի այլ գանգի վրա». Ա՝ 80-ը՝ «վերոհիշյալ գանգի մոտ», Տաթևի վանքի Ա՝ 85 արձանագրությունը՝ գրված է «մի խաչի վրա», Տաթևի Ա՝ 86 արձանագրությունը՝ գրված արծաթապատ և ոսկեզօծ պահարանի վրա և այլն: Պարզ է, որ վիճական արձանագրությունների շարքում մետաղների վրա գրված արձանագրությունները տեղ չպետք է գտնեն, իսկ եթե դրանք մտնելու են ժողովածուի մեջ, այդ դեպքում վերնագրի միջից «Վիճականություն» բառի վեմ (բար) հասկացողությունը պետք է հետաքննել: Այդ պարագային արձանագրությունների շարքում պետք է տալագրվեն նաև բաղմաթիվ ասեղնագործած ձեռագործների ու այլ առարկաների վրայի մակագրությունները:

Մեր կարծիքով, եթե անհրաժեշտություն կա վիճական արձանագրությունների ժողովածուի մեջ ապագրել նաև այլ արձանագրություններ, ապա դրանք պետք է գրվեն հավելվածի կամ ծանոթագրությունների մեջ:

Գրախոսվող գրքի առաջարկում առված է. «Ինչպես այս, նույնպես և հետագա պրակները կազմելու համար, որպես օրինակ, բնդունվել է հայկական արձանագրությունների հավաքման և հրատարակման համար ակադ. Հ. Ա. Օրբելու մշակած և կիրառած մեթոդը, որի էական հասկանիչները հետևյալներն են. ա) արտահայտել տառաձևերի և նրանց միացությունների ճշգրիտ պատկերը. բ) վերծանումների ժամանակ պահպանել բառերի հնչական և բնականական բոլոր առանձնահատկություններն ու բոլոր տեսակի լրացումները կատարել պայմանական և ակնառու նշաններով. գ) հնարավորին չափ կցել նաև արձանագրությունների լուսանկարները՝ որպես զոկումենտ»¹:

Այդ են ն. Մառի և Հ. Օրբելու՝ հայերեն վիճական արձանագրություններ հրատարակելու սկզբունքները, որոնց հետևել է նաև Ս. Բարխուդարյանը: Բայց մի թե վերոհիշյալ սկզբունքներն այսօր բավարարում են գիտության պահանջներին: Բնավ երբեք Մեր կարծիքով դրանցից բացի անհրաժեշտ է նաև հետևյալը.

1. Յուրաքանչյուր արձանագրության վրա նշել նրա տարեթիվը, նախ՝ իր վրա և դաժ թվականով և այնուհետև՝ այժմյան տոմարի թվականով: Եթե արձանագրությունը թվական

չունի, նրա մոտավոր ժամանակը որոշել կողմ նաև միջոցներով, ինչքան այդ հնարավոր է:

2. Որոշակի դարձնել և պարզել արձանագրությունների մեջ հիշատակված անձնանունները, տեղանունները, տոհմանունները, մեկնությանը անհատականի կամ արտասովոր բառերը, դարձվածքները և նախադասությունները:

3. Եթե արձանագրությունը նախօրոք հրատարակված է, ցույց տալ նախկին հրատարակությունների տարբերությունները:

Վերոհիշյալ լրացուցիչ երեք կետերը կիրառելու համար անհրաժեշտ է.

1. Վերծանումները տալագրել բնագրային փոքրատառերով, որպեսզի տեղանունների և անձնանունների սկզբնագրերը մեծատառով հանդես գան և սովորական բառերից տարբերվեն:

2. Ծանոթագրությունների մեջ մեկնաբանել բովանդակության հետ կապ ունեցող երևույթները, բացատրել բառերը, դարձվածքները, անունները և այլն:

3. Ծանոթագրություններից հետո տալ տարբերությունների բաժին, ցույց տալու համար բոլոր տեսակի անբնականի վերծանությունները: Գրքի ծավալը չմեծացնելու համար այդ տեղ կարելի է նշել միայն սխալ և այլիմաստ տարբերությունները, իսկ ուղղագրական տարբերությունները՝ ոչ (եթե նրանք առանձին կարևորություն չունեն):

Ինչպես հայտնի է, Ն. Մառը և Հ. Օրբելին հայերեն վիճական արձանագրությունների հրատարակման համար պատրաստել էին տպարանային հատուկ տառաձևեր՝ փակագիր նշանագրերով: Քարերի վրա գրված հայերեն արձանագրությունները մեկուկես հազարամյակի ընթացքում մեծ փոփոխությունների են ենթարկվել, փոփոխվել է գրերի լայնքը, երկարությունը, ստեղծների հաստությունը, ելուստների գրված հակությունը, գրերի բնահանուր ձևերը, թանձր ու նուրբ գծերը, գրերի կամարների տեսքը, գրերի թեթևությունը, միացյալ գրերի բաղմաթիվ տարատեսակությունները, մեծ և փոքր գրերի իրար կողքի հանդես գալը, շքեղագիր արձանագրությունները, գաղտնագրության ձևերը և բաղմաթիվ այլ հանգամանքներ: Այս բոլորին պետք է ավելացնել նաև այն, որ միջնադարյան մշակույթի մի շարք կենտրոններ ունեցել են իրենց ուրույն ոճը և

1 Այժմ առաջ է եկել մի հատուկ գիտություն՝ հայկական հնագրություն, որ ուսումնասիրում է հայոց գրչության հին ձևերը և ժամանակի ընթացքում կրած փոփոխությունները:

¹ «Ի՞նչպես հայ վիճագրության», էջ 51:

գրերի տարատեսակները վիժական արձանագրությունների համար: Այսպես է՝ Եղեղ, օրինակ, Անին, Հաղրատն ու Սանահինը, Խորանաշատն ու Նոր Վարագավանքը, Նոր Գեորգիեն ու Հաղարծինը: Այս բոլոր տարատեսակությունները արտահայտել տպարանային որևէ տպատեսակով, թեկուզ հատկապես արձանագրությունների ոճին հարմարեցրած, անհնարին է, որովհետև յուրաքանչյուր արձանագրության դիրքին՝ որ սուանձնահատուկ կողմ ունի՝ կամ պետք է յուրաքանչյուր արձանագրության համար նոր տառաձևեր հորինել, որ անհնարին և անիմաստ բան է, և կամ պետք է հրաժարվել տպագրական այդ տառաձևերից:

Ընդուն է վարվել Ս. Բարխուդարյանը, որ Ե. Մառի Եղանակից հեռացել է և արձանագրությունը ներկայացնելու համար օգտագործել, ինչպես ինքն է անվանում, արձանագրության գծագիր պատկերը: Այդ մասին գրքի առաջաբանում ասված է. «Նկատի ունենալով այն հանգամանքը, որ տպագրական տառերով անհնարին է արտահայտել արձանագրությունների գրչական անսահման բազմազանությունը, հարմար է կատեգորիալ ներկայացնելու արձանագրությունների գրչական անսահման բազմազանությունը, հարմար է կատեգորիալ ներկայացնելու արձանագրությունների գրչական անսահման բազմազանությունը, հարմար է կատեգորիալ ներկայացնելու արձանագրությունների գրչական անսահման բազմազանությունը»:

Ա. Արձանագրությունների քվականի կամ մոտավոր ժամանակի խնդիրը

Պատմական ամեն մի երևույթ գիտական արժեք է ստանում, երբ հայտնի է նրա տեղը և ժամանակը: Վիժական արձանագրությունները, իբրև պատմության աղբյուր, գիտական արժեք ունեն միայն այն դեպքում, երբ հայտնի է նրանց տեղն ու ժամանակը: Եթե այդ երկուսից մեկը մեզ անհայտ է, այսինքն չգիտենք, թե արձանագրության մեջ հիշատակվող դեպքերը ե՞րբ են տեղի ունեցել կամ որտե՞ղ են կատարվել, արձանագրությունը դադարում է պատմության աղբյուր լինելուց:

Քննարկվող գրքում արձանագրությունների տեղի գործոնին մեծ կարևորություն է տրված և յուրաքանչյուր արձանագրության վերևում նշված է, թե որտեղ է գտնվում նա, որ հու-

1 Ոմանց արտահայտած այն տեսակետը, թե արձանագրությունների գրերը հնում փորագրվել են շարվոնով կամ տրաֆարետով, չի հաստատվում իրական տվյալներով: Ամենուրեք հայտնի է, որ նախ քարերի վրա գծագրել են ներկով, գրերը հարմարեցրել քարի չափերին և հետո միայն փորագրել:

22 Հանդես, 1924, 1-2

րձնած տեղի և գրության տեսակետից»¹ (էջ 6):

Արձանագրություններ հրատարակելու այս եղանակը վաղուց ի վեր գործադրվել է ուրիշ լեզուներով հին արձանագրություններ հրատարակելիս, իսկ հայերեն արձանագրությունների համար այդ եղանակը կիրառվել է դրախոսվող այս գրքից շատ առաջ:

Իր գրքի առաջաբանում Ս. Բարխուդարյանը նշում է, որ նա «յուրաքանչյուր արձանագրությունից առաջ և հետո ծանոթություններ է դրել թերա տեղի ու դիրքի, ներկա վիճակի և վնասվածքների մասին, հավատացած լինելով, որ դրանք կօգնեն արձանագրության իմաստի բացահայտմանը» (էջ 6): Բայց ինչքան կոշտ և անարար արձանագրությունների իմաստի բացահայտումը, եթե նրանց տեղի ու դիրքի հետ միասին բոլոր դեպքերում նշվեն նաև նրանց տարին կամ մոտավոր ժամանակը, անհասկանալի բաների և դարձվածքների իմաստը բացորոշվին տեղանուններն ու անձնանունները, մեջ բերվին ուրիշների տարբերությունները և նշվեն հրատարակված արձանագրությունների մատենագիտական լրիվ ցանկը, այսինքն՝ լրիվ չափով կատարվել այն, ինչը կոչվում է վերծանություն, քանի որ առանց վերծանության արձանագրության հրատարակությունը քիչ է օգնում պատմության հարցերը լուսարանելու:

Հարձանի որ պատին, ներսում, թե դրսում: Սակայն ժամանակի խնդրի վրա համարյա թե ուշադրություն չի դարձված: Պրակում Եղած 422 արձանագրություններից իրենց վրա թվական ունեն միայն 231-ը, իսկ մնացած 191-ի ժամանակն անորոշ է: Ս. Բարխուդարյանը ծանոթագրությունների մեջ որոշել է թվական չունեցող արձանագրություններից միայն 11-ի մոտավոր և հավանական ժամանակը (դրանցից են, օրինակ, № 16 և № 64 անթվական արձանագրությունները), իսկ 180 արձանագրություններ մնացել են անորոշ, և գրքից օգտվողը ոչ մի միջոցով չի կարող որոշել նրանց թվականը, թեպետ և կարելի էր որոշել բոլոր անթվական արձանագրությունների մոտավոր ժամանակը:

Պրակի վերջում անհրաժեշտ էր ունենալ արձանագրությունների ժամանակագրական տախտակ, որպեսզի որոշ թվականներում կամ դարում տեղի ունեցած դեպքերի կապակցությամբ տեղեկություններ քաղելու համար ըն-

¹ «Դիվան հայ վիժագրություն», էջ 6:

թերացողը ստիպված չլինելու գրքի մեջ եղած բոլոր արձանագրությունները կարդալու:

Հրատարակված պրակի մեջ անհրաժեշտ ուշադրություն չի դարձված նաև թվական ունեցող արձանագրությունների վրա: Այժմ արձանագրության բովանդակությունը լրիվ կարդալուց հետո միայն կարելի է իմանալ՝ նա թվական ունի, թե ոչ: Բացի այդ, թվականները մեկնաբանված չեն և մնացել են իրենց նախնական վիճակում: Ինչպես որ գրված են արձանագրության մեջ, Ամեն մի օգտագործող ինքը պետք է փոխադրի աշխատել մեր թվականին, որ շատ ժամանակ է խելիու դիրքն օգտագործողներից, մանավանդ որ ամեն մարդ նույն հաջողությամբ չի կարող այդ փոխադրությունն անել:

Եթե կազմողը թվական ունեցող արձանագրությունների տարեթվերի վրա հատուկ ուշադրություն դարձներ և վերածեր այսօրվա համար հասկանալի տարեթվերի, գիրքը գերազանց մի շարք թյուրիմացություններից և սխալներից: Նշենք դրանցից մի քանիսը:

1. N° 300 արձանագրության թվականը ինչպես գծագրում, այնպես էլ վերծանության մեջ 201 է: Այդպիսի թվական չի կարող լինել, որովհետև Ծ-ն էլ, Լ-ն էլ տասնավորներ են և իրար կողքի չեն կարող լինել (Ծ-ն՝ 50 է, իսկ Լ-ն՝ 30): Այսպիսով, սովոր արձանագրության ժամանակը, մի տառասխալի պատճառով, մնում է անհայտ և գրքի սահմաններում անլուծելի: Կարելի է ենթադրել, որ Լ-ի փոխարեն Ը միավորն է լինելու, որով արձանագրությունը կունենա $208 = 758 + 551 = 1309$ թ.:

2. N° 326 արձանագրությունը. ինչքան էլ այդ զարմանալի թվա, երկու տարրեր թվական ունի: Սկսվում է 212, այսինքն՝ 1287 թվականով և վերջանում 200՝ 1306 թվականով: Թե ինչու է այդպես, կազմողն այդ մասին ոչինչ չի գրում, բայց երբ ուշադիր կարդում ենք արձանագրությունը, տեսնում ենք, որ այդտեղ երկու տարրեր արձանագրություններ թյուրիմացությամբ միացված են միմյանց: Դրանցից առաջինի մեջ գրված է, որ 1287 թ. Մանվելը խաչ է կանգնեցրել իր հոր՝ Սեթ քահանայի շիրտակին, իսկ երկրորդի մեջ ասված է, որ Սեթ քահանայի որդի Սանվել քահանան 1306 թ. մեռել է և թաղվել նույն տապանի մեջ: Ի միջի այլոց Սանվել բառը խիստ կասկածելի է: Հազիվ թե Սամուել-ի փոխարեն Սանվել գրելին: Մեզ թվում է, որ այդտեղ խոսքը նախորդ արձանագրության մեջ հիշատակվող Սանվել-ի մասին է: Մ. գլխատառի աջակողմյան վերին ելուստը լավ չլերնալու պատճառով այն Ս է կարդացվել և Մանվելը գարձել է Սանվել:

որով այն Ս է կարդացվել և Մանվելը գարձել է Սանվել:

3. Նույնպես երկու տարրեր թվական ունի N° 320 արձանագրությունը: Սկսվում հայերեն գրերով գրված է ՌՃԺԾ, այսինքն՝ 1666, իսկ տակը՝ արդի թվանշաններով՝ 1664: Կարելի է ենթադրել, որ հայկական թվականը արդի թվականի վերածելու ժամանակ սխալվել են և երկու տարրի պտկաս են ստացել: Բայց այդպես չէ: Երբ ծանոթանում ենք արձանագրության լուսանկարին, պարզվում է, որ եկեղեցու շինությունն ընթացքում, երբ դեռ շինարարությունն ավարտված չէր, նրա մուտքի ճակատակալ քարի կենտրոնում քանդակել են մի խաչքար և նրա տակ թվանշաններով գրել թվականը՝ 1664: Երկու տարրի հետո, երբ ավարտել են շինարարությունը, նույն ճակատակալ քարի խաչքարից ազատ մնացած տեղում փորագրել են կառուցման արձանագրությունը՝ իր թվականով: Նշանակում է, այդ 1664 թվականն խաչքարինն է և ոչ մի կապ չունի արձանագրության հետ:

4. Հավանաբար նման մի երևույթի արդյունք է նաև N° 38 արձանագրության երեք տարրեր տարեթվեր ունենալը (այս անգամ ոչ թե երկու, այլ 12 տարվա տարրերությամբ): Այս արձանագրությունը նույնպես քանդակված է եկեղեցու մուտքի կամարավոր քարի վրա և դարձյալ վերաբերում է եկեղեցու շինությանը: Բարբառով գրված է հետևյալը՝ «էս եկեղեցին կեղ շինեց թիվն ՌՃԺ ՌՃԺԱ. 1650», ՌՃԺ 1661, ՌՃԺԱ = 1662: Ս. Բարխուդադյանն այս թվականների մասին գիտություն է արել, թե «թվականները գրված են անճիշտ»:

Դժբախտաբար, լուսանկարը չկա, որ ստուգելու հնարավորություն լինի: Բայց ենթադրելի է, որ այստեղ 1650 թվականը արձանագրության հետ կապ չունի և վերաբերում է նույն ճակատակալ քարի վրա փորագրված խաչքարին, իսկ մնացած երկու թվականներին առաջինը ցույց է տալիս շինարարության սկիզբը, երկրորդը՝ կառուցման ավարտը: Այդպիսով, արձանագրությունը պետք է կարդալ հետևյալ կերպ. «էս եկեղեցին կեղ շինեց թիվն ՌՃԺ — ՌՃԺԱ», այսինքն՝ այս եկեղեցին գյուղը շինեց 1661—1662 թթ.:

5. N° 216 արձանագրությունը գծագրում ունի ՌՄԼԸ, իսկ վերծանության մեջ՝ ՌՄԼ թվականը: Պրակի հեղինակը Ը գիրը մոռանալով, ութը տարով նացրել է արձանագրությունը:

6. N° 390 արձանագրության գծագրում թվականը գրված է ՂԴ (94). դա ակնհայտ սխալ է, որովհետև մեր թվականով կստացվի 645, իսկ

այդ ժամանակ հայկական թվականը գեոուս գործածության մեջ չէր: Վերծանության մեջ Ս. Բարխուդարյանը այդ ՂԴ-ն դարձրել է ՆՂԴ (1045), բայց թե ի՞նչ հիման վրա՝ այդ մասին ոչինչ չի գրել: Այդ արձանագրության լուսանկարը ծանոթագրությունների մեջ ցույց է տրված N 146-ի տակ, բայց գրքում այդ համարով լուսանկար չկա:

7. N 158 արձանագրության թվականը գծագրում սխալ է. այնտեղ գրված է ՉՍ: Այդպիսի թվական չի կարող լինել, որովհետև $2 = 700$, իսկ $11 = 2709$: Հարցորավորից հետո տասնավոր պետք է լինի և ոչ թե հազարավոր: Սակայն էականն այն է, որ այդ ՉՍ գրերը թվական լինելու ոչ մի նշան չունեն: Թվականների կողքին սովորաբար ք կամ ք՛ գրերն են լինում, որպեսզի կարգացողն իմանա, որ խոսքը թվականին է. վերաբերում կամ էլ թվականը ցույց տվող գրերը կետերի մեջ են առնված լինում և կամ զլխին պատիվ է գրված լինում: Սակայն այստեղ այդ ՉՍ գրերը գծագրում ոչ մի նշան չունեն, հետևապես չի կարելի ենթադրել, որ այդ գրերը կարող են արձանագրության թվական լինել: Ս. Բարխուդարյանն այդ ՉՍ գրերը թվական է ենթադրել, առանց որևէ

հիմքի Ս գիրը դարձրել է Ա և ստացել ՉԱ (701 + 551 = 1252) և այդ ուղղած գրերն էլ երկու կողմից առել է կետերի մեջ: Այդ արձանագրությունը լուսանկար ունի, բայց ստուգելու ոչ մի հնար չկա, որովհետև լուսանկարի վրա այդ սովոր չի երևում: Հավանաբար այդտեղ (խա) չս բառն է:

8. N 395 արձանագրության մեջ, որ փորագրված է մի խաչքարի վրա, «Յիշեալ Ք(րիստոս)» բառերից առաջ երևում են Ղ և Թ գրերը, առանց որևէ նշանի: Ս. Բարխուդարյանն այդ երկու գրերի սկզբին ավելացրել է Թ՛՛՛ և ստացել Թ՛՛՛. ՆՂԹ (499 + 551 = 1050) թվականը, բայց որում թվանշանի համար սահմանված կետերն էլ ինքն է ավելացրել: Այսպիսով, այդ արձանագրության ՆՂԹ թվականը ևս, նախորդի նման, հիմնված է ոչ թե փաստերի, այլ լոկ ենթադրության վրա: Ընչ խոսք, որ ենթադրություններ կարելի է անել, բայց այդպիսի ենթադրությունները տվյալ դեպքում պետք է տեղ գտնեն ոչ թե բնագրի կամ վերծանության մեջ, այլ ծանոթագրություններում միայն, այն էլ՝ եթե որոշ հիմքեր կան այդ անելու: ՂԹ գրերը կարող են «յալալթա» բառի համառոտագրության մնացորդները լինել (յալալթա յիշեալ ի Քրիստոս) և կամ մի որևէ այլ բառի:

Բ. Արձանագրության գծագիր պատկերի և վերծանության մասին

Պրակում ներկայացված արձանագրությունների գծագրերն ընդհանուր առմամբ գոհացուցիչ են, սակայն նրանց մեջ կան այնպիսի թերություններ ու սխալներ, որոնք տեղ չպետք է գտնեին այս լուրջ գիտական հրատարակությունում: Արձանագրության գծագիրը հիմնականն է նրա վերծանության համար. ճիշտ է, լուսանկարն ավելի օբյեկտիվ տվյալներ ունի, բայց լուսանկարի վրա ամեն գիր պարզ չի երևում և բոլոր արձանագրությունները չեն, որ լուսանկար ունեն: Այս բոլորը հաշվի առնելով, արձանագրության հրատարակողն իր ուղղորդությունն ամենից առաջ բեկուկում է արձանագրության գծագրի ճշտության վրա:

Ժողովածուի մեջ բոլոր արձանագրությունները պետք է ունենան գծագրի պատկեր, առանց որի անհնար է վերծանել նրանց ճիշտ բովանդակությունը: Գծագրի պատկեր կարող են չունենալ միայն այն արձանագրությունները, որոնք ժողովածուն կաղմողը տեղում չի տեսել և իր գործոթ թերի վիճակում չթողնելու համար բացակայող (կորած, ավերված) արձանագրությունների բովանդակությունը մեջ է բերում հին հրատարակություններից, որոնց մեջ գծագիր գոյություն չունի:

Ս. Բարխուդարյանն ուրիշներից բազմաթիվ արձանագրությունների մասին քննարկվող պրակի առաջաբանում գրել է. «Այդպիսիները (այսինքն կորածները—Կ. Ղ.) վերցրել ենք նախկին հրատարակողներից, այն ձևով, ինչպես որ տրված են, առանց գծագրության և մանր շրիֆտով» (էջ 6—7):

Այս խնդրում Ս. Բարխուդարյանը միանգամայն ճիշտ է վարվել՝ իր ժողովածուի մեջ տեղավորելով №№ 68—93, 154, 240, 265—267, 314, 336—339, 380—381, 388, 414 և 415 արձանագրությունները, սակայն, մեզ անհասկանալի պատճառներով, գծագրի չունեն նաև հետևյալ ութ արձանագրությունները, որոնք ինքը տեսել է տեղում և սբանցից մի քանիսն էլ ինքն է հրատարակում առաջին անգամ. N 118բ (նորավանդ), N 127 (Հալիճոր), N 133—136 (Հարանց անապատ), N 192 (Տեղ գյուղ) և N 372 (Անգեղակոթ): Այսպիսի թյուրիմացություններից հետո մնալու համար գծագրերը կարելի է տեղավորել առանձին տախտակներով վրա, որ մեծ չափով դյուրացնում է նաև հնագրական տեսակետով արձանագրություններն ուսումնասիրողների գործը, որոնք շարունակ

ստիպված են բոլոր էջերը թերթի գրերը միմյանց հետ համեմատելու համար:

Գրախոսվող աշխատության գծագրերի և դրանց վերծանության մեջ նկատվում են սխալներ, որոնք մասնակի բնույթ ունեն: Նշենք դրանցից մի քանիսը: N° 12 արձանագրության երկրորդ տողում առաջնորդ տեղոյս սովորական դարձվածքը վերծանության մեջ դարձել է առաջնորդ մեղոյս: Տ և Մ գրերի շփոթության պատճառով տեղի առաջնորդները դարձել են մեղիի առաջնորդներ: Երրորդ տողում, գծագրի մեջ տր (տեղ) բառը երկու անգամ է գրված, իսկ վերծանության մեջ՝ մի անգամ: Հինգերորդ տողի վերջին և վեցերորդի սկզբին ի տարոջ-ի մեջ գծագրում է գիրը մոռացված է: Ութերորդ տողում ՅԺԸ հայրապետացն-ը գծագրում գրված է ՅԺԸ Հայրայ (պետացն), իսկ վերծանության մեջ ավելորդ չ գիրը չկա: Յոթերորդ տողում գծագրի մեջ գրված է նվույր առնէ, իսկ վերծանության մեջ առանց նշանի ուղղված է՝ անվույր առնէ: Երբորդ տողում պես ու տր Սողոմոն... երեսցող գրերը կազմողը վերականգնել է տր Հայրապետ ու տր Սողոմ (ոս) ձևով: Այստեղ նա առաջ տր բառի սկզբին նշան է գրել, որ ինքն է ավելացրել ջարդված գրերի տեղում, այնուհետև մոռացել է նշանը փակել, իսկ Սողոմոն բառի վերջին ո գիրը տեղում կա, բայց առնված է լրացման նշանների մեջ: Զորորդ տողում կարգեցին բառից գծագրի վրա երևում են կար գրերը: Վերծանության մեջ վերականգնման նշանից դուրս է մնացել նաև գ գիրը, որ նշանակում է, թե տեղում պահպանվել են ոչ թե կար, այլ կարգ գրերը: Տասներորդ տողում կատարիչի բառի կ-ն այդ լատիկ աճջատվել և միացել է նախորդ իսկ բառին:

Սիրանես քարագործի անունը հիշատակվում է ՄՄ 125 և 126 արձանագրությունների մեջ: N° 126-ի մեջ հիշատակված են նաև Սիրանեսի ծնողների անունները: Հոր անունը ինչպես գծագրում, այնպես էլ վերծանության մեջ Գոր է (հօրն մերո Գորա): Այդ տարօրինակ անունը բուն արձանագրության մեջ (տե՛ս լուսանկար N° 43) ոչ թե Գոր է, այլ Գորֆ, որ Գեորգ-ի գավառային ձևերից մեկն է և այլ արձանագրությունների մեջ ևս հիշատակված է: Տարօրինակ է նաև այն, որ այդ անունը ոչ Գոր և ոչ էլ Գորք ձևով չկա անձնանունների ցանկում: N° 94 արձանագրությունը սկսվում է առաջին դեմքով «ես տր Յուսմ» և այլն, այնուհետև անցնում է երրորդ դեմքի. «նորդ վեաց գսր եկեղեցիս» և վերջում նորից շարունակվում առաջին դեմքով: Կազմողը վերծանության մեջ նորոգեաց-ը փոխել է նորոգե-

ցի-ի, այսինքն՝ վերծանության մեջ խմբագրել է արձանագրության լեզուն և նրա մեջ փոփոխություն է մտցրել:

N° 229 արձանագրության վերծանության մեջ հինգերորդ տողում կարդում ենք. «ես առղեամբ գլխավանեալն ի բազում ամանակաց կրկին նորոգեցաք»: Հասկանալի է, որ առղեամբ խափանեալ չի կարող լինել, մանավանդ որ գծագրում չկա արդեամբք-ի երկրորդ ս գիրը և Ե-ն: Գծագրի վրա առղեամբ-ն փոխարեն առանց սխալի կարդացվում է Արդ. մեք: Այսպեսով, այդ հատվածը կարդացվում է «ես առղ. մեք, ղիսափանեալն ի բազում ամանակաց կրկին նորոգեցաք»:

N° 289 արձանագրության մեջ ասված է «ես տր Ստեփանոս... արհեստակցոս տն Սեսական եկի» և այլն: Տն գրերը գծագրի մեջ պատիվ չունեն, իսկ վերծանության մեջ նրանց ղիսին Ս. Բարխուդարյանը պատիվ է գրել, բայց պակասող գրերը չի լրացրել: Ինչպես հայտնի է, Տեսան բառն է համառոտագրվում տն ձևով, բայց հասկանալի է, որ արհեստակցոս տեսան Սիսական չի կարող լինել: Տն այստեղ տանն բառն է: Նշանակում է, այդ հատվածը կարդալու ենք՝ արհեստակցոս տանն Սիսական, որ Սյունյաց առաջնորդների սովորական տիպոսն էր:

Սխալներ կան նաև N° 1, 3, 65, 66, 75, 335 արձանագրությունների մեկնաբանությունների մեջ:

Ս. Բարխուդարյանի վերծանումների մեջ, որ ընդհանուր առմամբ հաջող են, երբեմն տեղ են գտել նաև կամայական ընթերցումներ: Այսպես, օրինակ՝ N° 35 (Տաթև) արձանագրության մեջ գրված է, որ մի ոմն քահանա տունկ է անկիլ և հող նվիրել Տաթևին, որի գիմաց ստացել է տարեկան 15 օր ժամ: Այդ արձանագրության մեջ հիշատակված է մի քառ, որ պրակի հեղինակը կարդացել է համեղանա, սակայն ինչպես լուսանկարի, այնպես էլ գծագրի վրա այդ բառի առաջին ա գիրը չկա՝ ոչ միացրած և ոչ էլ անջատ ձևով: Համեղանաչ-ը եթե ստուգաբանենք համեղ նաչ իմաստով, տեղին չի, մանավանդ, որ մինչև այժմ այդ բառն անծանոթ է մեր լեզվին: Այլ արձանագրություններից հայտնի է հարեղանաչ-աբեղանաչ բառը (հնում այդպես էր կոչվում վանքի միաբանների սենյին նվիրարկվող կալվածքը կամ որևէ այլ բան): Հավանաբար այստեղ այդ բառն է, որ հանդես է եկել ներդաճաճ ձևով:

N° 323 արձանագրության 13-րդ տողում միայն երեք գրեր կան՝ ֆնդ: Ս. Բարխուդարյանն այդ երեք գրերից, որոնք ոչ մի նշան

չունեն համառոտագրություն լինելու, առաջ է բերել երկու բառ՝ Բահանայ Գրիգորի: ՔՖ համառոտագրությունը Բահանայ է կարգացվում, բայց միայն այն դեպքում, երբ իրոր համառոտագրված է, իսկ այստեղ, ինչպես ասացինք, համառոտագրված լինելու ոչ մի նշան չկա: Բացի այդ, Գ գիրը Գրիգոր կարդալն էլ խիստ կամայական է. եթե նույնիսկ Գ գիրը անձնանվան սկզբնատառ համարենք, Գ-ով սկսվողն ինչո՞ւ անպայման Գրիգոր է լինելու, գուցե Պեճո՞րգ է կամ մի ա՞յլ անուն: Կամայական վերծանության օրինակներ կան նաև ՄՄ 152 և 404 արձանագրություններում:

Վերծանությունն ամբողջապես գլխագրերով ներկայացնելու պատճառով անհասկանալի է մնում, թե ո՞ր բառն է հատուկ և որը՝ հասարակ: Այսպես, օրինակ, № 26 արձանագրության մեջ կարդում ենք՝ ԵՍ ՏԻՐԱՅՈՒ ՔԱԶԱՆԱՅ ՄԻՒԲԱՆՆԱՅ և այլն: Այստեղ տիրացու բառի հասարակ կամ հատուկ անուն լինելը չի հասկացվում, և ընթերցողն էլ կարող է այդ բառը հասարակ անուն հասկանալ: Եթե վերծանությունը գրվեր՝ Ես Տիրացու Բահանայ միսրապետ և այլն, բոլորն էլ կհասկանային, որ Բահանայի անունը Տիրացու է: Մի այլ օրինակ. Մ 7 արձանագրության մեջ գրված է՝ ՋՅՈՒԼԱՆԵՍ ԵՐԷՅ ՍՈՒԳՈՔ ՅԻՇԵՅԷՔ, Սողոմոն ի՞նչ է, արդյոք մականո՞ւն, թե որե՞կ հասարակ բառ, չգիտենք:

Արձանագրությունների վերծանությունը պետք է ունենա այսօրվա կանոններին համաձայն կետադրություն, որպեսզի բովանդակությունը ճիշտ հասկանանք և գիտենանք, թե ժողովածուն կազմողն ինքն ինչպե՞ս է հասկացել այդ բառերն ու նախադասությունները: Կետադրության մասին պրակի հեղինակը առաջաբանում գրել է. «Կետադրական նշանները գործածել ենք զուտ և միայն խիստ որոշակի ավարտված իմաստի դեպքում»: Այդ տեսակետին մենք համաձայն չենք. եթե իմաստը խիստ որոշակի է, այդ դեպքում առանց կետադրու-

թյան էլ ճիշտ է հասկացվում: Կարևորն այն է, որ անորոշոր որոշակի դառնա և այդ հարցում վերծանողն իր հմտությունը ցուցաբերի: Մեզ թվում է, որ կետադրության մեջ պետք է զուտ լինել, բայց իմաստն անհասկանալի չպետք է թողնել:

Պրակում կան արձանագրություններ, որոնց վերծանությունը տարակուսելի է՝ կետադրության բացակայության պատճառով: Օրինակ, Տաթևի № 9 արձանագրությունը Ս. Բարխուդարյանի վերծանությամբ հետևյալ բովանդակությունն ունի. ՋԶԶԱՐ, ՇՆԶԱԽՈՐ ԳԻԼԵԼԻՇ... Հաւ-ից հետո ստորակետ կա, երևի չգա՞րը անձնանուն է: Մեզ թվում է, ՇՆԽԱՈՐ-ը, ինչպես նաև Գիլիսալ-ը անձնանուններ են, բայց թե ինչո՞ւ ստորակետով իրարից բաժանված չեն՝ չգիտենք: Երբ բառն անորոշ է, գրքից օգտվողը պետք է ինքն մտածի, պարզի, գրականություն և բառարաններ թերթի, այլ վայրերի արձանագրությունների մեջ նման օրինակներ ու անձնանուններ որոնի, հատուկ և հասարակ անուններն իրարից տարբերի: Բայց եթե այդ բոլորն աներ արձանագրություններ հրատարակողն ինքը, գրքից օգտվողի գործը կզրպարանար, և նա չէր մոլորվի կարդալով, օրինակ, այսպիսի մի արձանագրություն. «ՇԱԶԲԻ ԱՐԴԱՐԱՔԱՐԱ ՈՒ ՂԱԶԱՆՍ ՅԻՇԵՅԷՔ Ի ՔՍ...» (Մ 19): Ո՞րն է այստեղ անունը, որն է մականունը, երկո՞ւ անուն է, թե երեք, պարզ չէ: Բառերը մեկը մյուսից ստորակետով չեն բաժանված, չգիտենք, թե ինքը՝ հրատարակիչն ինչպես է հասկացել այս ամենը:

Դարձյալ կետադրական նշաններ չգործածելու հետևանքով չգիտենք, օրինակ, թե Մ 15 Էղծված արձանագրության պահպանված մասը միջո՞ւն է, ծախ ծա՞յրը, թե աջակողմյան մասը: Նույնպես և Մ 44 արձանագրությունը, որի մասին ծանոթության մեջ ասված է. «Մեժ արձանագրության միջին մասն է», բայց նրա ոչ սկզբում և ոչ էլ տողավերջին բազմակետեր չկան:

Գ. Պայմանական նշանների մասին

Պրակի հեղինակը թեև գրքի առաջաբանում խոստանում է «բոլոր տեսակի լրացումները կատարել պայմանական և ակնառու նշաններով», բայց հետո գործածության մեջ է դնում այլ նշաններ, այն էլ երբեմն գործածում է, երբեմն էլ ոչ: Տողանջատման նշաններն էլ բոլոր դեպքերում չեն գործածվում: ՄՄ 1—60 արձանագրությունների մեջ լրիվ տողանջատում ունեն բնդամենը 28 արձանագրություն (ՄՄ 2, 3, 4, 5, 7, 9, 10, 12—16, 18—21,

23, 27, 29—31, 38, 40—42, 44, 48 և 59), 7 արձանագրության վերծանության մեջ տողանջատումը կատարված է ոչ լրիվ (ՄՄ 6, 22, 26, 28, 32, 33, 35), 21 արձանագրության վերծանության մեջ տողանջատումը բոլորովին չկա (ՄՄ 8, 17, 24, 25, 34, 36, 37, 39, 43, 46, 47, 49—58), չորս արձանագրություն էլ միատող են կամ ուրիշների վերծանմամբ են մեջ բերված և այդ պատճառով տողանջատում չունեն (ՄՄ 1, 11, 45 և 60): Մեր կարծիքով

տողանջատման այդ եղանակը, որ սկսող... Հ. Սրբելու Մարմաշենի արձանագրությունների հրատարակությունից է ընդօրինակված, հաջող չէ և անբարոյական է, որովհետև տողերը համալուծված չեն և անշատոգ զծից հետո եկող տողը հայտնի չէ, թե որերորդն է։ Ամենայն դեպ վերծանության մեջ արձանագրությունը տող առ տող գրվել է. այս դեպքում պայմանական նշանների կարիք չի լինի և տողի սկզբին գրված թվանշանից կիմալվի նրա համարը։

Ս. Բարխուդարյանը լրիվ չափով չի կիրառել պայմանական մյուս նշանները ևս, որոնք վերաբերում են չեղած, քարոզված և համառոտագրած գրերը վերականգնելուն ու ավելորդ գրերը բնագրի միջից դուրս հանելուն։ Շատ անգամ նա բոլոր տեսակի վերականգնումները կատարել է առանց որևէ նշանի։

Բաղմալիով էն պայմանական նշանների թերի կամ սխալ կիրառման դեպքերը։ Այսպես օրինակ, N 150 արձանագրության մեջ մզուրմի բառից պակասում է միայն և գիրը։ Այդ գիրը վերականգնել է Ս. Բարխուդարյանը, բայց վերականգնման նշանները փոխանակ և գրի երկու կողմերում դնելու, նշանը բաց է արել նախորդ և գրի կողքին և այնուհետև մոտացել է փակել։ Ստացվել է, որ արձանագրության շարունակությունը մինչև վերջ ինքն է վերականգնել։ N 320 արձանագրության մեջ համապատասխան պայմանական նշաններով վերականգնել է շնորհիւ, ամենակալին, շինեցի, վաստա-

կոգ, Ազուլեցի և այլն։ Բայց պատժիրատուի անվան մեջ, որ Պետրոս է, և և Ո գրերը ինչու է լրացրել՝ առանց որևէ պայմանական նշանի։ Նույն արձանագրության մեջ փակագրերով գրված է Եղլն, ինքը վերականգնել է որդոյն, բայց առանց համապատասխան նշանների։ N 328 արձանագրությունը ընդամենը 10 բառ ունի, և գրանցից ութը ինքն է լրացրել, բայց ոչ մի պայմանական նշան չի օգտագործել։

Թվականը ցույց տվող գրերը վերծանության մեջ ամենուրեք երկու կողմից, կետերի մեջ են առնվել, առանց հաշվի առնելու այն հանդամանքը, թե նրանք բնագրում այդ կետերն ունեն, թե ոչ։ Բացի այդ, ք, րվ և այլ ձևերը, որոնք արձանագրությունների մեջ տարեկների սկզբին են գրվում և ցույց են տալիս րվիս, րվին, րուին, րուսկանիս բառերը, վերծանության մեջ միօրինակության են բերվել, նույնիսկ երբ բուն արձանագրության մեջ այդ բառը լրիվ է գրված, վերծանության մեջ կրճատվել և րվ, է դարձել (օրինակ, N 17 արձանագրությունում)։ Վերծանության մեջ սովորաբար կրճատված բառերը վերականգնում են, իսկ այստեղ կազմող հակառակ գործողություն է կատարել բնագրում լրիվ գրված րվա բառը վերծանության մեջ դարձրել է րվ, չափանբար միօրինակության բերելու ցանկությամբ, երբ բայց միօրինակությունը վերականգնում գոյություն չունի։

1. Լուսանկարների մասին

Երբի վերջում 40 տախտակների վրա տպագրված են 157 լուսանկարներ, որոնց թեքանակը և թեք հասկանալի, որակը միանգամայն դժբախտիչ է պրակի համար, եթե նկատի առնենք այն հանգամանքը, որ շրջիկ արշավախմբերի ունեցած հարմարանքներով անհնարին է լուսանկարել բոլոր արձանագրությունները։

Նույնպես լուսանկարների մի մասը ունի թերություններ, որոնք նսեմացնում են նրանց արժեքը։ Այսպես, լուսանկարների վրա հատուկ մտախառն և ներկերով ուժեղացված են գրերի զծերը։ Ըստ երևույթին այդ գործը կատարողը վիճական արձանագրությունների մասին որևէ հասկացողություն չի ունեցել, բանի որ ազատագրել է գրերի պատկերը և խեղաթյուրել նրանց բովանդակությունը։ Օրինակ, N 13 արձանագրության լուսանկարի մեջ ՍԻՆԵԱՆԵ ԲԱՐ ԳԱՐԺԵԼ Է ՍԻՆԵԱՆԵ N 61 արձանագրության լուսանկարում երրորդ տողի վերջում

վերկարված բառը դարձել է փրբի, չորրորդ տողի ոտգուոյ բառի մեջ գուոյ գրերը բոլորովին այլանդակվել են և չեն կարգացվում, հինգերորդ տողում հալեղրայր բառի ք գիրը դարձել է ւ, իսկ վեցերորդ տողում վառդ բառը կարգացվում է լաւ։ N 62 արձանագրության տառաթիւ բառը դարձել է տաւաթիւ։ N 204 արձանագրության մեջ «Եւ Պաշաւաքս կ(ա)կնեցի» բառերը, սեռուշի հետեւնեով, դարձել են Եւ պաշաւաքս կուպնե, և այլն։

Լուսանկարները, շատ դեպքերում, մեջ են բերված կտրված և թերի վիճակում։ Գրերի մասերը, երբեմն ամբողջ տողեր և ավելին, կտրատված ու հեռացված են, երբի այն նկատառումով, որ մնացած գրերն ավելի խոշոր ստացվեն։ Այս կտրատումները ևս մեծ չափով վնասում են լուսանկարների արժեքին։ Այսպես օրինակ, N 3 արձանագրության սկզբի ք գիրը կիսով չափ և վերջին Ղ գիրն ամբողջովին կտրված են։ Նույն արձանագրության առաջին

առողի գրերի գլուխները կիսով չափ կտրատված են: Նույնը կարելի է ասել № 5 արձանագրության լուսանկարի մասին, որտեղ առաջին տողի վերջում և գիրը և երկրորդ տողում ա գիրը վնասված են: Երկրորդ տախտակի 6 և 7 լուսանկարների գրերի գլուխները և ստորին վերջավորությունները նույնպես վնասված են: Զորորդ տախտակի վրա նկարների ծայրերը կտրատելուց շատ է վնասվել 18 լուսանկար: Վեցերորդ տախտակի 21 և 22 լուսանկարները կտրատելուց շատ են տուժել, 22-րդ լուսանկարի վերջին տողի գրերի միայն գլուխներն են երևում: Նույն տախտակի 24 լուսանկարի սկզբի խաբուն բառի առաջին գիրը կտրված է և այդ բառը կարդացվում է աքուն և այլն:

Անհաջող է նաև լուսանկարների դասավորությունը: Տախտակների վրա տեղավորված լուսանկարներն ունեն իրենց հերթական համարները, անկախ արձանագրությունների համարներից, բայց բացակայում են 14, 57, 59, 90, 91, 146 և 147 համարների լուսանկարները: Մի լուսանկար էլ ունի երկու համար՝ 109 և 111: Բացի դրանից, լուսանկարների համարակալության մեջ կան համարների անտեղի կրկնություններ, որոնք դժվարացնում, նույնիսկ անհնարին են դարձնում լուսանկարների օգտագործումը: Այսպես, 17 համարի սակ եղած երկու լուսանկարներն էլ 39 արձանագրության մասերն են ներկայացնում: 53 համարով կա դարձյալ 2 լուսանկար, մեկը՝ 158 և մյուսը՝ 159 արձանագրության համար: Երկուական լուսանկարներ կան նաև հետևյալ համարների տակ. 54, 56, 62, 73, 76, 101, 124, 134, 135, որոնք կամ տարբեր արձանագրությունների են պատկանում (62, 101, 134, 135) և կամ միևնույն արձանագրության մասերն են ներկայացնում (54, 56, 73, 76, 124): Երեքական լուսանկարներ են գրված 92, 107, 124, 179, 343 համարների տակ, որոնցից 107-ի երեք լուսանկարներն էլ միևնույն արձանագրության (№ 288) մասերն են ներկայացնում, իսկ մնացածները բոլորն էլ տարբեր արձանագրությունների են պատկանում:

Բազմաթիվ սխալ ցուցումներ կան արձանագրությունների տակ բերված լուսանկարների և տախտակների վերաբերյալ, որոնցից մի քանիսը նշված են նկատված վրիպակների ցանկի մեջ, իսկ մի մասը ոչ:

Այս բոլորը խիստ դժվարացնում են նկարների օգտագործումը, իսկ եթե մեկը ցանկանա լուսանկարով գտնել արձանագրությունը, այդ նրան չի հաջողվի, որովհետև լուսանկարների տակ չի նշված, թե նրանք որ արձանագրությանն են պատկանում:

Լուսանկարների առանձին համարակալությունը բոլորովին ավելորդ է: Լուսանկարի տակ պետք է գրել միայն արձանագրության համարը և ուրիշ ոչինչ, իսկ արձանագրության վերժանության տակ՝ տախտակի համարը: Ինչ խոսք, որ առավել լավ է, եթե լուսանկարները ոչ թե գրքի վերջում, այլ վերժանության հետ միասին տպագրվեն. այն ժամանակ նույնիսկ գրքի էջերը շրջելու կարիքը չի լինի:

* * *

Վերջում ուզում ենք ընդգծել, որ Հնագիտության և ազգագրության ինստիտուտը գիտական խոշոր գործ է ձեռնարկել: Այդ մեծ գործը պահանջում է լավ մշակած սկզբունքներ և կանոններ: Ս. Բարխուդարյանը վիժական արձանագրությունների լավագույն մասնագետներից մեկն է, բայց 15—20 հատորանոց համահավաք ժողովածուն կազմելը մի մարդու ուժերից վեր է: Ինստիտուտն այդ աշխատանքի շուրջը պետք է համախմբի նաև այլ մասնագետների և ստեղծի մնայուն կազմ՝ գործը հաստատուն և ծրագրված կերպով առաջ տանելու համար:

Անհրաժեշտ է նաև կազմել հնավայրերում վիժական արձանագրությունների հավաքելու ընդհանուր ծրագիր, հաշվի առնելով անհատների մոտ արդեն հավաքված և ինստիտուտի գիվանում պահվող ժողովածուները, որպեսզի չկրկնվի արդեն իսկ կատարված աշխատանքը:

Կ. ՂԱՅԻԿԻՆՅԱՆ

Г. А. БРУТЯН, *Теория познания общей семантики*. Издательство АН Армянской ССР, Ереван, 1959, 320 стр., цена 1 р. 23 к.

Среди буржуазных школ современной философии и логики широким распространением пользуется неопозитивизм, придерживающийся взгляда, что единственным источником знания являются субъективные

восприятия. В рядах неопозитивистов наиболее заметную роль играют семантики. Под семантикой, или семасиологией, ныне разумеется наука о значениях, учение об отношениях между знаками, т. е.